

Հասմիկ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԴԵՐԸ ԻՍՊԱՆԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ
ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ**

Սույն հոդվածում քննվում է իսպաներենի դասավանդման գործում հաղորդակցական մեթոդի դերը, որի լայն կիրառումը կապված է նաև լեզվական տարբեր գիտակարգերում տեղի ունեցած էական փոփոխությունների հետ, որտեղ լեզվի՝ որպես կանոնների համակարգի ընկալումից անցում է կատարվել դեպի նոր՝ լեզվի՝ որպես հաղորդակցական համակարգի ընկալում՝ կարևորելով լեզվի գործառական և հաղորդակցական հայեցակերպերը: Հոդվածում քննվում են իսպանական իրականության մեջ հաղորդակցական մեթոդի հիման վրա ստեղծված տարբեր դասագրքեր՝ հատկապես կարևորելով հաղորդակցական-քերականական մեթոդաբանության դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման համար նախատեսված դասագրքերի մշակման գործում:

Բանալի բառեր. *հաղորդակցական մեթոդ, հաղորդակցական իրազեկություն, իրադրություն, դասագիրք, դասավանդում առաջադրանքների միջոցով, հաղորդակցական գործընթացներ, քերականական և գործառական մեթոդաբանություն*

Օտար լեզուների դասավանդման գործընթացում հաղորդակցական մեթոդի կիրառումը նոր մեթոդական մոտեցում է, որը կապված է վերջին տարիներին լեզվական տարբեր գիտակարգերի բուռն զարգացման հետ, որտեղ լեզվի՝ որպես քերականական կանոնների և բառային միավորների համակարգի ընկալումից անցում է կատարվել դեպի նոր՝ լեզվի՝ որպես հաղորդակցական համակարգի ընկալում՝ կարևորելով լեզվի գործառական և հաղորդակցական հայեցակերպերը: Այս պարագայում օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակը ոչ միայն լեզվական, այլ առավելապես հաղորդակցական իրազեկության զարգացումն է: Ուսումնառության/ուսուցման այս նոր մոտեցումը արտացոլում է նաև վերջին տարիներին տարբեր գիտակարգերի՝ հատկապես հանրալեզվաբանության, գործառական լեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, հոգելեզվաբանության, ճանաչողական հոգեբանության ձեռքբերումները: Այս տեսանկյունից մեծ կարևորություն են ձեռք բերում ուսուցման բովանդակությունը, սովորողի և դասավանդողի դերը, ուսումնական նյութերը, դասավանդման պրոցեսում օգտագործվող հնարներն ու միջոցները, գործաբանական ներուժ ունեցող բառապաշարի ուսուցումը, իսկ դասավանդման հիմնական նպատակը սովորողի հաղորդակցական նպատակների իրագործումն է՝ պայմանավորված որոշակի անհրաժեշտություններով: Հաղորդակցական մեթոդը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները.

1. Իրադրություններ, որտեղ գործածվում է լեզուն (օրինակ՝ հիվանդանոց):

2. Գործառույթներ, որոնք համապատասխանում են լեզվի գործածման հիմնական նպատակներին (այցելել բժշկին, խնդրել բուժօգնություն, գրել դեղատոմս, խորհուրդ տալ և այլն) և արտահայտում են խոսողի հաղորդակցական այս կամ այն դիտավորությունը:

3. Նշված նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ գաղափարներ (տվյալ առարկաներին, գործողություններին, հատկանիշներին առնչվող բառապաշար): Վերոհիշյալ իրադրության դեպքում խոսքը վերաբերում է բժշկական մասնագիտական բառապաշարին, քաղաքավարության տարրական նորմերին, ողջույնի խոսքերին, տեղեկատվություն ստանալու միջոցներին և այլն:

4. Լեզվական այն ձևերը (արտահայտություններ, կլիշեներ, շարահյուսական կառույցներ և այլն), որոնք հատուկ են տվյալ իրադրության մեջ օգտագործվող լեզվական նշակարգին:

Հաղորդակցական մեթոդի կարևորագույն հասկացություններից է հաղորդակցական իրազեկությունը: Հայտնի լեզվաբան Հայմսը /Hymes, 1972: 269-293/ իր աշխատություններում առաջին անգամ մանրամասն ներկայացրել է հաղորդակցական իրազեկության գաղափարը, ըստ որի սովորողը պետք է իմանա *ի՞նչ ասել, ու՞մ ասել, ինչպե՞ս ասել* հարկ եղած ձևով հաղորդակցական տվյալ իրադրության մեջ: Իրազեկության նման ընկալումը շատ ավելի լայն է, քան Ն. Խոմսկու քերականական իրազեկությունը, որը վերաբերում է վերացական քերականական գիտելիքներին: Այսօր ելնելով «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում» աշխատության սկզբունքներից՝ հաղորդակցական իրազեկությունը դիտարկվում է որպես մի քանի բաղադրիչների ամբողջություն՝ լեզվական, հանրալեզվական և գործաբանական: Լեզվական իրազեկությունը ներառում է գիտելիքներ և կարողություններ բառապաշարի, հնչյունաբանության և շարահյուսության, ինչպես նաև լեզվի՝ որպես համակարգի այլ հայեցակետերի վերաբերյալ: Հանրալեզվական իրազեկությունը վերաբերում է լեզվի կիրառության սոցիալ-մշակութային պայմաններին, մինչդեռ գործաբանական իրազեկությունը առնչվում է լեզվական միջոցների գործառական կիրառմանը /MCER, 2002: 24-25/:

Ելնելով Եվրոխորհրդի լեզվաքաղաքականության հիմնադրույթներից՝ Դ. Ա. Վիլկինսը 1972թ. առաջադրել է գաղափարական-գործառական ծրագրավորման գաղափարը, որը հիմնվում է սովորողի հաղորդակցական դիտավորության վերլուծության վրա: Նա տարբերակում է 2 տեսակի կարգեր. գաղափարական կարգեր, որոնք իմաստային- քերականական բնույթ ունեն (խոսքն այն հասկացությունների մասին է, որ մենք արտահայտում ենք լեզվի միջոցով՝ ժամանակ, տեղ, հաջորդականություն, քանակ և այլն) և գործառական կարգեր, որոնք գործաբանական բնույթի են և առնչվում են խոսողի դիտավորությանը: Տվյալ դեպքում խոսքը հաղորդակցական գործառույթների

մասին է, ինչպես օրինակ, ներկայանալ, ներողություն խնդրել, խորհուրդ հարցնել, արտահայտել իր ուրախությունը, դժգոհությունը և այլն /Wilkins, 1972; 1976/: Ավելի ուշ՝ 1975թ., Վիլկինսի առաջադրած գաղափարական-գործառական ծրագրավորման տեսական կաղապարը հիմք հանդիսացավ մշակելու Սո Nivel Umbral (Շեմային մակարդակ) փաստաթղթի դրույթները, որը մեծ նշանակություն ունեցավ հաղորդակցական մեթոդի վրա հիմնված եվրոպական տարբեր ծրագրերի և դասագրքերի ստեղծման գործում:

Գաղափարական-գործառական կաղապարի վրա հիմնված իսպաներեն լեզվի (օտարերկրացիների համար նախատեսված) առաջին դասագիրքը հրատարակվել է 1982թ.: Դա Ռ. և Մ. Սանչեսի «Entre nosotros» դասագիրքն էր, որը սակայն լիովին չէր ձեռքբազատվել ավանդական մեթոդաբանությունից և աչքի չէր ընկնում իր նորարարությամբ: Վիլկինսի առաջադրած կաղապարի վրա իրապես հիմնված իսպանական առաջին դասագիրքը՝ «Para empezar: Curso comunicativo de español para extranjeros», հրատարակվել է 1984թ. Pragma խմբի կողմից: Ավելի ուշ՝ 1986 թ., նույն խմբի կողմից հրատարակվում է հայտնի «Esto funciona» դասագիրքը, իսկ Avance խմբի կողմից՝ Antena-ն:

Վերջին տարիներին հաղորդակցական մեթոդաբանության կարևոր ներդրումներից է համարվում օտար լեզուների դասավանդման պրոցեսում միջմշակութային իրազեկության զարգացումը: Սա ենթադրում է նաև այլ մշակույթների նկատմամբ հետաքրքրության խթանում, մշակութային տարբերությունների ճիշտ ընկալում, փոխըմբռնման, այլ մշակույթների նկատմամբ հարգանքի և հանդուրժողականության մթնոլորտի ստեղծում:

Հաղորդակցական մեթոդի վրա հիմնված դասավանդման պրոցեսում կարևոր նշանակություն ունի նաև հուզական հայեցակերպը: Այս առումով առանձնանում է Մ. Սեռոլասայի, Օ. Սեռոլասայի և Բ. Լյովետի Planeta (1998) հաղորդակցական դասընթացը՝ 4 մակարդակներով: Գրքի հեղինակները՝ Բ. Լյովետը և Մ. Սեռոլասան, նշում են, որ սովորողը զգացական էակ է, հետևաբար և դասավանդման ժամանակ հաղորդակցական դիրքորոշումը պետք է միավորել հուզական և հոգեբանական գործոնների հետ՝ ուսումնառության օպտիմալացումը ապահովելու նպատակով /Llovet, Cerrolaza, 2010: 127/: Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է տվյալ անձին ընկալել իր հուզական ողջ բնութագրով՝ խթանելով նրա ինքնագնահատականը և կարևորելով ուսումնառության նպաստավոր մթնոլորտը, ինչը խրախուսում և մոտիվացնում է և՛ ուսանողին, և՛ դասախոսին:

Հաղորդակցությունը երկու գրուցակիցների միջև իրագործվող հաղորդակցական ակտ է, որն ունի կոնկրետ նպատակադրում, հետևաբար և անհրաժեշտ է, որ հաղորդակցական ակտի մասնակիցները մասնակցեն իրական առաջադրանքների կատարմանը և օգտագործեն իրենց լեզվական գիտելիքները (բառապաշար, քերականական, հնչյունական կանոններ և այլն) ասույթի իմաստը «բանակցելու» նպատակով: Իրական հաղորդակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջադրանքները կազմելիս հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

1. Հաղորդակցական բացեր. գրուցակիցների միջև առկա է իրական հաղորդակցություն, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում է ձեռք բերել այն տեղեկատվությունը, որը հայտնի է միայն իր գրուցակցին: Եթե նա ձեռք չի բերում այդ տեղեկատվությունը, ապա չի կատարում իր առաջադրանքը և չի կարող կարծիք հայտնել քննարկվող խնդրի շուրջ:

2. Արտահայտության ազատություն. խոսողը ազատ է բովանդակության, լեզվական ձևի, տոնի, խոսքի պահի և այլնի ընտրության հարցում:

3. Ջրուցակցի խոսքային և ոչ խոսքային հակազդեցությունները հաղորդակցական դիտավորությունները իրագործելու ցուցիչներ են:

Հաղորդակցական դասավանդումը առաջադրանքների միջոցով, որտեղ առավելապես կարևորվում է լսարանում իրական հաղորդակցական գործընթացների ստեղծումն ու զարգացումը, այսօր օտար լեզուների դասավանդման կարևոր ձեռքբերումներից է: Այս դեպքում յուրաքանչյուր դաս (դասագրքի միավոր) ծրագրավորվում է որևէ վերջնական առաջադրանքի շուրջ, օրինակ՝ գրել հանրաճանաչ որևէ գրողի կամ երաժշտի կենսագրությունը, պատրաստել իսպանական ազգային որևէ ճաշատեսակ, վերջերս տեղի ունեցած քաղաքական կամ մշակութային որևէ իրադարձության վերաբերյալ գրել կարծիք և այլն: Լսարանում մնան աշխատանքի վրա հիմնված դասագրքերից են Մ.Պերիսի և Ս. Բաուլենասի *Gente*-ն (1997), Մ. Մեռլասայի, Օ. Մեռլասայի և Բ. Լյովետի *Planeta*-ն (1999), Խ. Կորպասի, Ա. Գարմենդիայի և Կ. Սորիանոյի *Aula*-ն (2008): Նշված դասագրքերում ներառված նյութերը կարելի է վերափոխել և ստեղծագործաբար զարգացնել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր լսարանի հետաքրքրությունները, առանձնահատկությունները, ինչպես նաև ուսանողների մոտիվացիան: Եթե քննենք *Gente*-ի վերջնական առաջադրանքները, ապա ակնհայտ է, որ ենթադրելով ուսանողների պարտադիր ներգրավումը դասապրոցեստում, վերջիններս մեծ հնարավորություններ են ընձեռում հաղորդակցական հմտությունների զարգացման համար:

Այդուհանդերձ, բացառապես հաղորդակցական մեթոդով դասավանդելը, որը հիմնվում է բանավոր խոսքի վրա, դարձել է տարբեր քննադատությունների առարկա: Այդ դեպքում հաշվի չեն առնվում հաղորդակցության համար անհրաժեշտ բոլոր լեզվական հմտությունները, հաղորդակցական ակտը գերազանցապես հիմնվում է խոսակցական լեզվի վրա՝ բավարար չափով հաշվի չառնելով սոցիալ-մշակութային համատեքստը, հաղորդակցության կոնկրետ նպատակները և այլն: Կարևորելով լեզվի գործածությունը զուտ հաղորդակցական նպատակներով՝ բնականաբար թերագնահատվում է ասույթի քերականական բովանդակությունը, և այդ պատճառով տարբեր մասնագետների մոտ կասկածներ են առաջանում, թե արդյոք այս մոտեցումը կիրառելի է դասավանդման բոլոր մակարդակների և տարիքային բոլոր խմբերի նկատմամբ, արդյոք այս մեթոդով կարող են աշխատել այն դասախոսները, որոնց մայրենի լեզուն ուսուցանվող լեզուն չէ, արդյոք կարելի է գնահատել հաղորդակցական իրազեկությունը և այլն /Melero Abadía, 2000: 104-105/: Իհարկե, դասավանդման գործընթացում մեծ դեր են խաղում նաև

այլ մեթոդներ՝ նկատի ունենալով, որ յուրաքանչյուր մեթոդի գործածությունը ինքնանպատակ չէ, այլ իրականում այն միջոց է կամ գործիք կոնկրետ նպատակներ իրագործելու համար: Առաջադրանքների միջոցով հաղորդակցական դասավանդումը չի բացառում քերականական տարբեր կանոնների և երևույթների քննություն. խնդիրը պարզապես նրանում է, թե ինչպես դասավանդել քերականություն: Ի վերջո, դասավանդման առանցքն այստեղ վերջնական առաջադրանքն է, որն էլ մատնացույց է անում, թե ինչ պետք է իմանան ուսանողները այն կատարելու համար (ասույթի հնչյունական, ձևաբանական, իմաստային, շարահյուսական, գործաբանական, գործառական և այլ բաղադրիչներ):

Իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործում հաղորդակցական և ձևական-ավանդական մոտեցումները ներդաշնակ ձևով միահյուսելը մարտահրավերներ է ներկայացնում և՛ տեսական, և՛ գործնական առումով: Վերջին տարիներին հրատարակված իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասագրքերում ակնհայտ է հաղորդակցական դասավանդման սկզբունքների (լեզուն որպես հաղորդակցության միջոց) միահյուսումը քերականական-բառային կառույցների ուսուցման հետ (լեզուն որպես համակարգ) տարաբնույթ վարժությունների միջոցով /Melero Abadía, 2004: 710/: Լեզվի՝ որպես հաղորդակցական գործիքի և համակարգի միաժամանակյա ընկալումը հիմք է հանդիսացել «քերականական և գործառական մեթոդաբանության» կամ «հաղորդակցական և քերականական մոտեցման» հիման վրա վերջին տարիներին Իսպանիայում հրատարակված որոշ դասագրքերի ստեղծման համար, որոնց շարքում առանձնանում են Cumbre-ն, Sueña-ն, Método de español para extranjeros, Español sin fronteras և այլ դասագրքեր: Վերջին դասագրքի հեղինակները՝ Խ. Սանչեսը, Կ. Մորենոն և Ի. Սանտոսը, ելնելով լեզվի երկակի՝ որպես համակարգի և հաղորդակցության գործիքի դիստրկումից, իրենց մեթոդը բնորոշում են որպես «միաժամանակ հաղորդակցական և քերականական», որպես դասական, բայց միաժամանակ նորացված ու արդիականացված, իսկ դասագիրքը հիմնվում է հավասարակշռված մեթոդաբանության վրա՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողի լեզվական և հաղորդակցական կարողությունները: Իսկ ահա Sueña 2 (Libro del alumno) դասագրքի հեղինակները նախաբանում նշում են, որ գրքի նպատակն է, որ ուսանողները ձեռք բերեն լեզվական միջին իրազեկություն և կարողանան հաղորդակցվել առօրյա բարդ իրադրություններում:

Վերոհիշյալ բոլոր դասագրքերում քերականական նյութն ուսուցանվում է կոնկրետ հաղորդակցական իրադրություններում: Թեև գործնական կիրառության ժամանակ ի հայտ են գալիս այս դասագրքերի միջև առկա մի շարք տարբերություններ, այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ քերականական նյութն ամրապնդող ավանդական բնույթի վարժությունները բոլոր դասագրքերում միահյուսված են հաղորդակցական բնույթի վարժությունների հետ՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների հաղորդակցական կարողությունները: Հաղորդակցական քերականությունը դասագրքերում ներա-

ռելիս հաշվի է առնվում համատեքստը, սովորողների տեղեկատվական պաշարը, ինչպես նաև լեզվի գործածության «արտահայտչական էֆեկտները», քանի որ լեզուն սուկ քերականական համակարգ չէ: Եվ որպես Հորացիոսի հնագույն պատվիրանի՝ *delectare et prodesse* նորագույն տարբերակ՝ հաղորդակցական մեթոդը փորձում է դասավանդումը կազմակերպել «հաճույք պատճառելով» կամ էլ այս դեպքում «ցույց տալով մեզ լեզվի առավել պարզ և նվազ քերականական դեմքը» /Gutierrez Rivero, 2004: 449/:

Որոշ մասնագետների (Գուտիերես Ռիվերո և այլք) կարծիքով Planeta-ն առավելապես օգտագործվում է իսպաներեն լեզվի ինտենսիվ կուրսերի համար: Այն, ինչպես և շատ այլ դասագրքեր, հիմնական դասագրքից բացի ներառում է նաև ուղեցույց դասախոսի համար և քերականական ձեռնարկ, որտեղ քերականությունը ներկայացված է ավելի ավանդական ձևով: Prisma-ն հրատարակվել է Edinumen հրատարակչության կողմից 2002թ.-ին, այն համապատասխանում է Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի, Սերվանտեսի ինստիտուտի Plan Curricular-ի սկզբունքներին և բաժանված է 6 մակարդակների՝ ըստ լեզուների իմացության ընդհանուր սանդղակի: Այս դասագրքում քերականությանն ավելի մեծ տեղ է տրվում, քան Planeta և Gente դասագրքերում: Ներածության մեջ գրքի հեղինակները նշում են, որ Prisma-ն համադրական մեթոդ է, քանի որ հաղորդակցական հնարները նրանում միավորվում են այլ՝ ավելի համակարգային մեթոդների հետ, սակայն միշտ հաղորդակցական տեսանկյունից: Այդուհանդերձ, նշված դասագրքերում ավելի շատ կարևորվում է ոչ թե քերականությունը, այլ հաղորդակցական նպատակադրումները:

Օտար լեզուների դասավանդման գործում մեծ դեր է խաղում նաև հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը, որի հիմնական նպատակը խոսքային հաղորդակցության ուսուցումն է, օտարալեզու խոսքի բառաքերականական հիմքերի զարգացումն ու կատարելագործումը, որը ենթադրում է լեզվական նյութի ճիշտ ընտրություն և համակարգում, ինչպես նաև «աշխարհի պատկերի» վերաբերյալ տարբեր լեզվամշակութային համայնքների ներկայացուցիչների հենքային գիտելիքների ընդլայնում: Տվյալ դեպքում, իրադրային համատեքստից բացի, կարևորվում են նաև հաղորդակցիցների մտավոր, հոգեբանական, մշակութային և այլ առանձնահատկություններ:

Այսօր լեզուների դասավանդման գործընթացում ակնհայտ են նորարարական մոտեցումները: Առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերել հաղորդակցական իրազեկությունն ապահովող գործընթացները, փոխներգործուն ուսուցման, սովորողների հենքային գիտելիքների զարգացման և այլ խնդիրներ: Բնութագրելով հաղորդակցական մեթոդի զարգացման ճանապարհը՝ իսպանացի հայտնի մեթոդիստ Պ. Մելերո Աբադիան նշում է, որ եթե ավելի վաղ մեծ ուշադրություն էր դարձվում, թե ինչ պետք է դասավանդել (զաղափարներ և գործառնություններ), այնուհետև՝ ինչպես դասավանդել (հաղորդակցական մեթոդաբանություն), ապա ավելի ուշ կարևորվեց, թե ինչպես

զարգացնել հաղորդակցական գործընթացները լսարանում (դասավանդում առաջադրանքների միջոցով) /Melero Abadía, 2004: 711/: Այս գործընթացում մեծ դեր ունեն նաև «Լեզուների իմացության/իրազեկության համակարգային համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում» հիմնարար աշխատությունը, ինչպես նաև Սերվանտեսի ինստիտուտի կողից առաջարկված Plan Curricular-ը, որտեղ առաջադրվում են ընդհանուր չափորոշիչներ ուսումնական ծրագրերի մշակման, դասագրքերի ստեղծման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Álvarez Martínez M. Á. y otros. Sueña, Madrid: Anaya, 2000.
2. Cerrolaza M., Cerrolaza Ó y Llovet B. Planeta E/LE, Madrid: Edelsa Grupo Didascalía, 1999.
3. Corpas J., Garmendia A., Soriano C. Aula Internacional. Barcelona: Difusión, S.L., 2008.
4. Equipo Prisma, Prisma. Método de Español para Extranjeros, Madrid: Edinumen, 2002.
5. Gutiérrez Rivero A. La gramática en tres manuales de ELE actuales // *XV Congreso Internacional de la ASELE, Las Gramáticas y los Diccionarios en la Enseñanza del Español como Segunda Lengua: Deseo y Realidad*, Sevilla, 2004.
6. Hymes D. On communicative competence // *J. B. Pride y J. Holmes (eds. Sociolinguistics)*. Harmondsworth: Penguin, 1972.
7. Instituto Cervantes: La enseñanza del español como lengua extranjera. Plan curricular del Instituto Cervantes, Madrid: Instituto Cervantes, 1994.
8. Llovet B., Cerrolaza M. Una visión humanista del aprendizaje /enseñanza de E/LE: valores y principios metodológicos // *Didáctica del español como lengua extranjera (Coordinación: L. Miquel y N. Sans)*, Madrid: Fundación Actilibre, 2010, 10.
9. Marco común europeo de referencia para las lenguas: aprendizaje, enseñanza, evaluación, Madrid. Secretaría General Técnica del MECD y Grupo Anaya, traducido y adaptado por el Instituto Cervantes, 2002.
10. Martín Peris E. y Sans Baulenas N. Gente. Curso comunicativo basado en el enfoque por tareas. Barcelona: Difusión, 1997.
11. Melero Abadía P. De los programas nocional-funcionales a la enseñanza comunicativa // *J. Sánchez e I. Santos (eds.), Vademécum para la formación de profesores. Enseñar español como segunda lengua (L2)/lengua extranjera (LE)*, Madrid: SGEL, 2004.
12. Melero Abadía P. Métodos y enfoques en la enseñanza/aprendizaje del español como lengua extranjera. Madrid: Edelsa, 2000.

13. Sánchez J., Moreno C. y Santos I. Español sin fronteras. Madrid: SGEL, 2003.
14. Wilkins D. Linguistics in language teaching. London: Arnold, 1972.
15. Wilkins D. Notional Syllabuses. Oxford: Oxford University Press, 1976.

А. БАГДАСАРЯН – Роль коммуникативного метода в преподавании испанского языка как иностранного. – В статье обсуждается роль коммуникативной методики в преподавании испанского языка, широкое применение которой связано также с существенными изменениями, имеющими место в разных языковых дисциплинах. В последних восприятие языка как системы правил перешло к восприятию языка как коммуникативной системы с учетом значимости функциональных и коммуникативных аспектов. Рассматриваются разные учебники, составленные по коммуникативной методике в испанской действительности, в частности, принимая во внимание существенную значимость коммуникативно-грамматической методологии для составления учебников испанского как иностранного языка.

Ключевые слова: коммуникативная методика, коммуникативная компетенция, ситуация, учебник, преподавание с использованием упражнений, коммуникативные процессы, грамматическая и функциональная методология

H. BAGHDASARYAN – The Role of Communicative Method in Teaching Spanish as a Foreign Language. – The paper deals with the communicative method in teaching Spanish. The extensive use of the method is connected with the significant changes which took place in different linguistic disciplines, whereby the initial perception of language as a system of rules was gradually replaced by language being perceived as a communicative system, attaching importance to its functional and communicative aspects. The research is based on the study of various Spanish textbooks which, being based on the communicative method, highlights the role of the communicative-grammatical methodology in developing textbooks for teaching Spanish as a foreign language.

Key words: communicative method, communicative competence, situation, textbook, teaching exercises, communicative processes, grammatical and functional methodology